# ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1909 ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ ԹԻՒ 5-6.

# ԿՈՐԾԱՆՈՒԱԾԸ

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

*Տեսարանը ներկայացնում է Այվանդեանների բնակարանը։ Ընդարձակ հիւրասենեակ, խորքում երկու դռներ, որոնցից աջ կողմինը տանում է սեղանատուն, ձախինը Ֆիլիպի սենեակը։ Աջ պատի մէջ եւս երկու դռներ, առաջինի կողմինը դէպի Ալեքսանդրի առանձնասենեակը, երկրորդը դէպի նախասենեակ։ Ձախ պատը ներկայացնում է երկու լուսամուտ, որոնց միջեւ դռներ դէպի պատշգամբ։*

*Բեմի մէջտեղում կլոր սեղան, գունաւոր սփռոցով ծածկուած, վրէն գեղեցկակազմ ալբոմներ եւ պատկերազարդ հանդէսներ, բոլոր երեք կիսաբազկաթոռներ։ Աջ պատի երկու դռների միջեւ գահաւորակ եւ բազկաթոռներ։ Գահաւորակի վերեւում կախուած է Ֆլորայի հանգուցեալ մեծադիր պատկերը։ Ցասակի վրայ զարդեր, պատերի վրայ նկարներ։ Խորքի պատի առջեւ հայելի։ Անկիւնում փոքրիկ եւ մեծ ծաղկամաններ։ Ձախ պատի մօտ, լուսամտի առջեւ պիանօ։ Վառարան չի երեւում. մի գեղեցիկ էկրան ծածկում է երկաթէ շոգեկիրը* (calorifère).

### ՏԵՍԻԼ I

**Դանիէլ եւ Սօֆիա**

Սօֆիա. (*Երիտասարդ, աշխոյժ աղջիկ է։ Վարագոյրը բարձրանալիս կարմիր փետուրներից կազմած փոշեփալով սրբում է բազկաթոռները փոշուց եւ կարգի է բերում հիւրասենեակը, հանդարտ երգելով։*)

Դանիէլ. (*Կարմիր այտերով, մեծ բրով երիտասարդ է։ Հագած է պիջակ, օձած շապիկ։ Մէջքին կապած է սպիտակ գոգնոց։ Պատշգամբի դռներից ներս է բերում մի մեծ ծաղկաման եւ տնքտնքալով դնում է մի անկիւնում։*) Հըը հը՛. էս էլ պրծանք։ Վալլահ, էս ծաղիկները հոգիս բերանս բերին։ Աստու տուած օրը դուրս բեր, ջրի ու ներս բեր. «Նաչալնիք, բոլշա նիչաւօ» *)։ (*Ճակատի քրտինքը սրբում է գոգնոցով։*)

Սօֆիա. Քիչ է մնում հա, ցրտերը մօտենում են, շուտով կըհաւաքեն, կըտանեն պարտէզ մինչեւ հոկտեմբեր։

---

*) Նաչալնիկ, բոլշե նիչեգօ ռուսերէն է, կընշանակէ — „պատիժ է, ուրիշ ոչինչ։"

digitised by A.R.A.R.@

Դանիէլ. Եանի՛ք վեր ամառ-ձմեռ քաղաքում թողնեն համթամա՛մութ կինի՛․ Հըսկանում չըմ, աա տօն ա թա հի՞նչ։ Ստեղ եչի, կասես Փիթօն՛վանց բաղչան ինի Մախլա՛ս։ (Գլուխը շարժելով, դիմում է դէպի աջ պատի երկրորդ դռները։)

Սոֆիա. Դանիէ՛լ...

Դանիէլ. (Կանգ է առնում, բայց յետ չի նայում։) Հա, հի՞նչ ըս ուզում։ Ջալդ տաս, պեն օնիմ։

Սոֆիա. (Մօտենալով, ցածր ձայնով) Այն ո՞վ է նստած պարոնի սենեակում։

Դանիէլ. Հի՞ն գիտամ, մի չեչմեակաւոր մարդ ա քեաչալ գլխով։ Օրի՞չ։

Սոֆիա. Ես երէկ այստեղ չէի, Արտաշէսն էլի եկել էր։

Դանիէլ. Պա ես քեզ համար շպիօն 1) ըմ, թա՞ կուրիէր։ Ես հի՞ն գիտամ եկալ ա թա վեչ։ Ինչ՞ ըս հարցնում։ (Նայում է Սօֆիային։)

Սոֆիա. Հէնց այնպէս։ Այդ տղան այս տունը առաջ գնելուց յետոյ օրիորդը փոխուել է։ Տխուր տրտում օրն երեկոյ նստած է իւր սենեակում։ Երէկ պարոնը հարցրեց. «Ֆլօրա, այս ամառ ո՞րտեղ ես ուզում, որ քեզ համար ամառանոց վարձեմ։» Օրիորդը պատասխանեց. «Ոչ մի տեղ։» Ուրեմն, այս տարի մենք ամառանոց չենք գնալու։

Դանիէլ. (Զայրացած) Ըմբօ, հո՞ւնց թա քինիլա՛կան չընք։ Գործադուլ կանեմ։

Սոֆիա. (Ծիծաղելով) Մեն-մենա՞կ։

Դանիէլ. Պա հո՞նց։ Պա ես էօ խալարա չհարի չոքում պիտի հալվի՞մ հունց—որ մեղրամո՞մ։ Ամա հուսա՛տալ մի, աղան ուժա 2) կիալօսկում դաչ 3) ա փռնալ։ Եշիլ մի, քո բարիշնան փարսխո 4) ա անըմ։ (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով։)

## ՏԵՍԻԼ II.

### Ալեքսանդր եւ Սոֆիա

Ալեքսանդր. (Ալեխառն ընչացքով, յստակ սափրած երեսով, բարի եւ խելացի դէմքով մարդ է։ Հագած է սեւ զուգի ժակէ, պանտալօն եւ ժիլէտ։ Ձեռքը ծանրաբարոյ եւ հանգիստ են։ Դուրս է գալիս ծանր քայլերով աջ կողմի առաջին դռներից։) Ֆլօրան տա՞նն է։

Սոֆիա. Այո։

Ալեքսանդր. Խնդրեցէք նրան այստեղ գալ։

Սոֆիա. Իսկոյն։ (Գնում է խորքի ձախ դռներով։)

Ալեքսանդր. (Ծանր քայլերով մօտենում է լուսամտին, նայում է դուրս, ապա յետ է գալիս եւ նայում է գահաւորակի վերեւում կախած պատկերին եւ ծանր հառաչում։)

## ՏԵՍԻԼ III.

### Ալեքսանդր եւ Ֆլօրա

Ֆլօրա. (Դուրս է գալիս խորքի ձախ դռներից։ Հագած է տնային պարզ հագուստ։ Նկատելի տխուր է։) Հայրիկ։ (Համբուրում է) Այսօր քեզ առաջին անգամն եմ տեսնում։ Դու զբաղուած էիր քո սենեակում մի պարոնի հետ։

Ալեքսանդր. Նստիր, Ֆլօրա, քեզ հետ գործ ունիմ։ (Նստում է կիսաբազկաթոռներից մէկի վրայ։)

Ֆլօրա. (Նստելով նոր դէմ։) Հրամայիր, հայրիկ։

Ալեքսանդր. Ես կտակս գրել տուեցի...

Ֆլօրա. (Անհանգիստ) Հայրիկ...

Ալեքսանդր. Մի՛ տխրիր, աղջիկս։ Մահը մերն է, մենք մահինը։ Վաղուց էր հարկաւոր։ Արդէն մօտենում եմ վաթսունին եւ շատ էլ առողջ չեմ զգում ինձ։ Քանի խելքս գլխումս է, պէտք է հոգամ քո մասին։ Կտակիս ընդհանուր բովանդակութիւնն այս է. կարողութեանս կէսը տալիս եմ զանազան ազգային գործերի համար։ Ի միջի այլոց, հանգուցեալ մօրդ անունով կըբացուի մի ուսումնարան եւ կըպահուին որդեգիրներ։ Մանրամասնութիւնների հետ կըծանօթանաս մահիցս յետոյ։ Միւս կէսը կարողութեանս, որ հօրիցս եմ ժառանգել, այս տան հետ թողնում եմ քեզ համար։ Կտակակատար նշանակում եմ իմ բարեկամ Սենեքերիմ Սահառունուն, միակ անշահասէր մարդուն, որ ճանաչել եմ կեանքիս մէջ։ Համաձա՞յն ես։

---

1) Շպիօն — լրտես։ 2) Ուժա — արդէն։ 3) Դաչ — ամառանոց։ 4) Փարսխօ ա անըմ — խելքին զօռ է տալիս։

digitised by A.R.A.R.@

Ֆլօրա. Հայրիկ, քո կամքն ինձ համար օրէնք է։

Ալեքսանդր. Ոչ, Ֆլօրա, այդպէս չէ։ Դու գիտես, որ ես բռնակալ հայրերից չեմ։ Մանկութիւնից քեզ պահել եմ ազատ եւ, փառք Աստծու, այսօր տեսնում եմ, որ ազատութիւնդ ի չարը գործ չես դրել։ Բայց գլխաւորն այս չէ, Ֆլօրա, ես ունիմ մի մեծ հոգս. ահա այս մասին է, որ ուզում եմ քեզ հետ խօսել բարեկամաբար։ Ասա՛ ինձ, Ֆլօրա, դու չե՞ս մտածում ամուսնանալու մասին։

Ֆլօրա. (Շփոթուելով) Հայրի՜կ...

Ալեքսանդր. Մի՛ ամաչիր, դու երեխայ չես։ Ես փափագում եմ վիճակդ կարգաւորուած տեսնել, յետոյ մեռնիլ։ Ֆլօրա, ո՞ւմ ես հաւանում մեր երիտասարդների մէջ...

Ֆլօրա. (Աւելի շփոթուելով) Չգիտեմ, հայրիկ...

Ալեքսանդր. Ասա, մի՛ քաշուիր։ Ես քեզ համար ոչ միայն հայր եմ, այլեւ մայր։ Ծերութեանս մի նայիր, հոգով այնքան էլ խաւար չեմ։

Ֆլօրա. Հայրիկ, կըկամենայի, որ իմ հաւանածը նախ եւ առաջ քեզ դուր գար։ Ահա բոլորը, ինչ որ կարող եմ ասել։

Ալեքսանդր. Ապրիս։ Որ այդպէս է, ուրեմն կարող ենք մի համաձայնութեան գալ։ Տասը տարի է ես մտքումս որոշած ունիմ քո փեսացուն։

Ֆլօրա. (Անհանգիստ) Հայրիկ...

Ալեքսանդր. (Ժպտալով) Հանգիստ կաց. իմ ընտրելին իսկ եւ իսկ քո հաւանածն է։ Ինչո՞ւ ես կարմրում, տեսնում ես, որ ես չեմ բարկանում։ Ֆլօրա, ես էլ գիտեմ, որ ամուսնական երջանկութիւնը ոչ փողի հետ է կապուած եւ ոչ գիրքի ու ծագման։ Փառք Աստծու, դու այնքան ունիս, որ բաւական է քեզ էլ ու քո ամուսնուն էլ։ Արտաշէսը աղքատ ընտանիքի զաւակ է, բայց Սենեքերիմի որդին է։ Նա այնքան բարոյական է եւ մաքուր, որքան իւր հայրը։

Ֆլօրա. Բայց դու նրան լաւ չես ճանաչում, հայրիկ։ Չէ՞ որ հինգ տարի է չես տեսել նրան։

Ալեքսանդր. Իմ հասակի մարդու համար, սիրելիս, բաւական է մէկի հետ երկու անգամ խօսել, որ նրան ճանաչի ոտքից մինչեւ գլուխ։ Արտաշէսն երեք-չորս անգամ եկել է ինձ մօտ իւր յարգանքները յայտնելու։ Ես երկար խօսել եմ հետը։

Ֆլօրա. (Անհանգիստ շարժումն է անում։)

Ալեքսանդր. Մի՛ վախենար. քո մասին չենք խօսել։ Նա, իհարկէ, փոխուել է, շատ է փոխուել։ Նա այժմ կատարեալ տղամարդ է, խելքը գլխին, բայց նրա սիրտը եւ հոգին չեն փոխուել։ Ֆլօրա, Արտաշէսը նման չէ մեր այն երիտասարդներին, որոնք Ռուսաստանից կամ Եւրոպայից վերադառնում են... հոգով էլ մարմնով էլ ապականուած։ Ես շատերի հետ եմ խօսել եւ ոչ մէկն ինձ վրայ այնպիսի լաւ տպաւորութիւն չի արել։ Ես իմն ասացի, Ֆլօրա, այժմ հերթը քոնն է։ Ես լսում եմ, ասա, ոչ մի բան մի թաքցնիր։

Ֆլօրա. Հայրիկ, քեզ նման հօրից գաղտնիք ունենալը յանցանք կըլինի։ Ես Արտաշէսին հաւանում եմ — ճշմարիտ է, բայց այս է բոլորը, ուրիշ գաղտնիք չունիմ։

Ալեքսանդր. Ուրեմն ձեր մէջ խօսակցութիւն չի՞ եղել։

Ֆլօրա. Ո՛չ։

Ալեքսանդր. Եւ ո՞չ մի ակնարկ նրա կողմից։

Ֆլօրա. Ո՛չ։

Ալեքսանդր. Նա համակրո՞ւմ է քեզ.

Ֆլօրա. Չգիտեմ։ Նա ինձ հետ վարւում է առաջուայ պէս, ինչպէս իւր քրոջ հետ, պարզ, հասարակ, բայց վերջին աստիճանի համեստ։ Հայրիկ, նա շատ մտախոհ է։ Ինձ թւում է, որ նրա հոգու վրայ ծանրանում է մի մեծ հոգս։

Ալեքսանդր. Նա ինձ ասում էր, թէ այստեղ չի մնալու։

Ֆլօրա. Այո, նա շուտով գնալու է, գուցէ վաղը կամ միւս օրը։

Ալեքսանդր. Ո՞ւր։

Ֆլօրա. Չգիտեմ։

Ալեքսանդր. Էհ, Տէրը նրա հետ, որ գնում է։ Ֆլօրա, մի՛ շտապիր, լաւ մտածիր ապագայիդ մասին, ես քեզ տալիս եմ կատարեալ ազատութիւն։ Բայց ընտրութիւնդ շատ էլ մի յետաձգիր։ Այս գիշեր դարձեալ երազումս մօրդ տեսայ։ Այս երրորդ անգամն է, որ նա կանչում է ինձ իւր մօտ։ (Վեր է կենում։)

digitised by A.R.A.R.@

Ֆլօրա. (*Վեր է կենում ժպտելով*) *Հայրի՛կ. այդպէս մի՛ խօսիր։*

Ալեքսանդր. (*Մօտենում է իւր կնոջ պատկերին*) *Ահա նա իւր հին կերպարանքով։ Ի՛նչպէս նա բարի էր, Ֆլօրա։ Նրան ամենքը յարգում էին ու սիրում։ Նա էլ իւր հօր միակ զաւակն էր քեզ պէս։ Նրա հայրը մի ազնիւ զինուորական էր։ Լաւ կին էր հանգուցեալը։*

Ֆլօրա. (*Նոյնպէս զգածուել է*) *Ութ տարի է մեռել է, այսօր էլ աչքերիս առջեւ է նրա դագաղը ծաղիկներով ծածկուած։* (*Թաշկինակը մօտեցնում է աչքերին։*)

Ալեքսանդր. (*Յուզումը զսպելով*) *Դու լա՞ց եղար... Այդ չեղաւ։ Մի՛ նայիր ինձ, ես ծեր եմ։ Լացը քեզ չի սազում, ուրախ կաց։ Այդպէս։ Ուշադրութի՛ւն մի՛ դարձրու ինձ, վերջերս ներվերս մի քիչ թուլացել են։ Դէ, եթէ սիրում ես ինձ, նստիր եւ մի ուրախ բան նուագիր։ Իսկ ես պէտք է գնամ նոտարի մօտ կտակիս սրբագրութիւնը կարգադրելու։ Յետոյ պէտք է Մենեքշելիմին տեսնեմ։ Լսեցի՞ր. նստիր ու մի ուրախ բան նուագիր։ Ցտեսութիւն։* (*Համբուրում է Ֆլօրային եւ գնում աջ կողմի երկրորդ դռներով։*) *Նուագի՛ր. ես սիրում եմ, երբ դու ինձ ճանապարհ ես դնում եւ ընդունում երաժշտութեամբ։*

Ֆլօրա. (*Ուղեկցում է հօրը մինչեւ դռները. նայում է ետեւից։*) *Բարի մարդ։ Նա դեռ չըգիտէ...* (*Մօտենում է դաշնամուրին, մի քանի վայրկեան նուագում է ուրախ եղանակ։ Շուտով վեր է կենում, լուսամուտով նայում է դուրս։*)

*Նախասենեակից լսւում է էլեկտրական զանգակի հնչիւն։*

Ֆլօրա. (*Ցնցւում է եւ յետ նայում։*)

Սոֆիա. (*Գալիս է խորքի ձախ դռներից։*) *Օրիորդ, տա՞նն էք։* (*Գնում է նախասենեակ։*)

Ֆլօրա. *Այո, այո։* (*Մենակ*) *Սիրտս վկայում է, որ նա է։* (*Շտապով գնում է խորքի ձախ դռներով եւ իսկոյն յետ է գալիս մի փոքրիկ արկղիկ ձեռին։ Արկղիկը դնում է դաշնամուրի վրայ եւ նայում է դէպի նախասենեակի դռները։*)

## ՏԵՍԻԼ IV.

### Ֆլօրա եւ Արտաշէս

Արտաշէս. (*Գալիս է աջ կողմի երկրորդ դռներից։ Նկատելի յուզուած է։ Հագած է նոյն հագուստը, միայն կապոյտ շապկի փոխարէն օսլայած շապիկ եւ ժիլէտ։*) *Ֆլօրա, բարեւ։* (*Սեղմում է Ֆլօրայի ձեռը ընկերաբար, միւս ձեռում պահած լայնեզր փափուկ գլխարկը ճմլած։*)

Ֆլօրա. *Բարեւ։ Այդ ինչո՞ւ համար դողում է ձեր ձեռը։ Գրազ կըգամ, որ դարձեալ ընդհարուել էք ձեր հօր հետ։*

Արտաշէս. *Չէք սխալւում։* (*Նստում է մէջտեղի կիսաբազկաթոռներից մէկի վրայ։*) *Ընդհարուեցի. այո, եւ այս անգամ այնպէս, որ նա ինձ անուանեց ազգադաւաճան։*

Ֆլօրա. *Մի՞թէ։ Չէ՞ք կարծում, որ գաղափարների տարբերութիւնը կարող է այդպէս գրգռել հայրերին ու զաւակներին միմեանց դէմ։* (*Նստում է Արտաշէսի դէմ։*)

Արտաշէս. *Իմ հայրը մոլեռանդ հայ է — ես ճանաչում եմ համամարդկայինը։ Նա յամառ է իւր սկզբունքների մէջ — ես ոչ մի քայլ չեմ զիջում նրան։ Ինչպէս նա է ուղղամիտ եւ շիտակ — նոյնպէս ե՛ւ ես չեմ կարող կեղծել։ Այս տեսակ հակառակորդների մէջ հաշտութիւն չի կարող լինել։*

Ֆլօրա. *Բայց յարգանք կարո՞ղ է լինել։*

Արտաշէս. *Եթէ յարգանքը մի զգացում է եւ ոչ ձեւ, ապա այն չըպիտի աղաւաղել։ Իմ կարծիքով իսկական յարգանք կարելի է ունենալ միայն դէպի այն մարդիկ, որոնց գաղափարներն էլ յարգում ես։ Ի հարկէ, ես իմ հօրը յարգում եմ իբրեւ ծնողի, բայց եթէ այդպէս շարունակուի, հազիւ թէ կարողանամ պահել իմ զգացումը։ Նա պահանջում է, որ ես խօսեմ ու գործեմ հակառակ իմ սեպհական գաղափարների։ Այդ չի կարող լինել, երբէ՛ք... Բայց թողնենք. Ֆլօրա, գլուխս պայթում է վիճաբանութիւնից։*

Ֆլօրա. *Դժբաղդաբար, ես չըգիտեմ ինչպէս զբաղեցնեմ ձեզ։ Եթէ առաջուայ Արտաշէսը լինէիք, գուցէ կարողանայի...*

Արտաշէս. *Եթէ առաջուայ Արտաշէսից իմ մէջ ոչինչ մնացած չըլինէր, այս տունը ոտք*

digitised by A.R.A.R.@

*չըպիտի գնէի։ Այն ինչ՝ պատանեկան յիշողութիւնները գրեթէ ամեն օր ինձ քաշում բերում են այստեղ հակառակ իմ սկզբունքների։*

**Ֆլորա.** *Հակառակ ձեր սկզբունքների՞։ Չեմ հասկանում ձեր միտքը։*

**Արտաշես.** *Համեմատեցէք մեր դիրքերը — կըհասկանաք։*

**Ֆլորա.** *Ուզում՝ էք ասել, որ ձեր սկզբունքներն արհամարհում են մեզ նմանների ծանօթութիւնը, այո՞։*

**Արտաշես.** *Ֆլորա, մեր կռիւը հարստութեան դէմ լինելով, կամայ ակամայ և՛ւ հարուստների դէմ է։*

**Ֆլորա.** (Մի քիչ վշտացած) *Իմ հայրն երբէք ոչ ոքի չի զրկել, չի հարստահարել։ Նրա կարողութեան մի մասը հայրական է, միւսը բաղդի բերմունք։*

**Արտաշես.** *Բայց սեպհականութիւն է, չէ՞։* (Վեր է կենում)։

**Ֆլորա.** *Ենթադրենք, թէ այդ սեպհականութիւնը չունինք, աղքատ ենք, այն ժամանա՞կ։* (Վեր է կենում։)

**Արտաշես.** *Այն ժամանակ ես աւելի համարձակ ոտք կըդնէի այս տուն։ Այն ժամանակ իմ պատանեկան երջանիկ անցեալն աւելի հաճոյքով կըյիշէի։ Այն ժամանակ այն մի քանի օրերը, որ ես այստեղ պիտի մնայի, ինձ համար մի տեսակ ամօթալի երկդիմութեան եւ խղճի խայթոցների օրեր չէին լինի։*

**Ֆլորա.** *Լսեցէ՛ք. այսօր հայրս իւր կարողութեան կէսը կտակեց բարեգործական նպատակներով, միւս կէսն ինձ է պատկանելու։ Ենթադրենք, թէ մի օր ես վերցնում եմ եւ իմ ունեցածը տալիս եմ ձեզ, ինչ կանէիք, գետը՞ կըշպրտէիք։*

**Արտաշես.** *Ֆլորա, երեխայ չէք դուք։ Թշնամու զէնքը խլելով, նոյն թշնամու զինակիցների դէմ են գործածում։ Մենք ունինք մի մեծ գործ, որ բացի անձնազոհութիւնից պահանջում է և՛ւ դրամ։ Այս այն զէնքն է, որ պակասում է մեզ։*

**Ֆլորա.** *Պահանջեցէք, գուցէ տամ ձեզ այդ զէնքը։*

**Արտաշես.** *Ումի՞ց։*

**Ֆլորա.** *Գիտէք ինչ. ինձ համար իսկապէս մութն է այն գործը, որի մասին խօսում էք։ Բայց ես հաւատում եմ, որ լաւ գործ է, որովհետեւ դուք էլ խառն էք։ Ես ձեզ եմ միայն հաւատում եւ ոչ այդ կոպիտ Հրանտներին։ Պահանջեցէք, եւ ես կըտամ որքան կարող եմ, այսինքն բոլորը. ինչ-որ ունիմ։*

**Արտաշես.** *Մի՛ խոստանաք այն, ինչ-որ ձեր ուժերից վեր է։ Եղել են մեծ զոհաբերութիւն անող կանայք. բայց զուր կըլինէր այնպիսիներին փնտռել հայերի մէջ։*

**Ֆլորա.** *Շնորհակալ ենք ձեր հաճոյախօսութեան համար։* (Մօտենում է պիանոյին եւ այնտեղից վերցնում արկղիկը։) *Լսեցէ՛ք. իմ այժմեան ամբողջ հարստութիւնն այս արկղիկի մէջ է։ Այս իմ մօր քարեղէններն ու ոսկեղէնն են, որ այժմ պատկանում են ինձ։ Հայրս իրաւունք չունի նրանց վրայ։ Երէկ ես վճռեցի այս բոլորը նուիրել ձեր տառապեալ ընկերների օգտին։ Վերցրէք եւ գործադրեցէք, ինչպէս կամենաք։* (Արկղիկը դնում է մէջտեղի սեղանի վրայ։)

**Արտաշես.** (Վերցնում է արկղիկը եւ բաց անում։) *Ֆլորա, դուք կատա՞կ էք անում։*

**Ֆլորա.** *Ո՛չ. պարոն, ես այդ տեսակ բաների հետ կատակ անել չեմ կարող։*

**Արտաշես.** *Այստեղ մի ամբողջ հարստութիւն կայ. լա՛ւ մտածեցէք։*

**Ֆլորա.** *Ես բոլորը մտածել եմ եւ այնպէս վճռել։ Վերցրէ՛ք։*

**Արտաշես.** *Ո՛չ, ես չեմ կարող ընդունել մի այդպիսի նուէր։* (Դնում է արկղիկը սեղանի վրայ։)

**Ֆլորա.** *Պատճա՞ռը։*

**Արտաշես.** *Դրանք նուիրական բաներ են, կապուած ձեր մօր յիշատակի հետ։*

**Ֆլորա.** *Մի՛ վախենաք, մայրս ինձ չի անիծիլ գերեզմանից, այլ կօրհնի այս զոհաբերութեան համար։ Նրա սիրտը բարի էր եւ ընդարձակ։*

**Արտաշես.** *Այնու ամենայնիւ, չեմ կարող ընդունիլ այդպիսի թանգագին նուէր, մանաւանդ մի հայ օրիորդից, որի համար ծնողների յիշատակը սուրբ է։*

**Ֆլորա.** (Դառն հեգնութեամբ) *Մի՞թէ։ Իսկ հայ օրիորդին նախատել կարո՞ղ էք։*

**Արտաշես.** *Ե՞ս։*

digitised by A.R.A.R.@

**Ֆլորա**. (Գրգռուելով) Այո, դուք։ Յիշո՞ւմ էք ինչ ասացիք հէնց առաջին օրը երբ այստեղ էիք։ Դուք ասացիք, թէ հայ աղջիկը շատ յետ է մնացել օտարներից, թէ նրա միտքը սահմանափակ է, սիրտը նեղ, զգացումներն աղքատ։ Իսկ ես ո՞վ եմ։ Ոչ միայն մի հայուհի, այլեւ մի բուրժուայի անհոգ եւ անմիտ մեծացած աղջիկ։ Փոյթ չէ, թող ձեր ասածը լինի, միայն թէ ցանկալի կլինէր, որ դուք, նախքան դատավճիռ տալը, մի փոքր խորը ուսումնասիրէիք մեր սիրտը։ Ով գիտէ, գուցէ աւելի բան գտնէիք այնտեղ, քան կարծում էք։

**Արտաշէս**. Գուցէ։

**Ֆլորա**. Յիշո՞ւմ էք այն օրուայ ձեր պատմածները։

**Արտաշէս**. Ինչի՞ մասին։

**Ֆլորա**. Մարդկային անհուն վշտերի, հարիւրաւոր ուսանողների կրած տառապանքների, հալածանքի, բանտի, աքսորի, կախաղանի՝ Երբ դուք, այնպէս յափշտակուած նկարագրում էիք այդ բոլորը, ես մտածում էի իմ անհոգ կեանքի մասին։ Եւ թւաց ինձ, որ ես մի չնչին արարած եմ, արհամարհանքի արժանի։ Ես չըգիտէի ամօթից ու խղճի տանջանքից ինչպէս նայեմ ձեր երեսին։

**Արտաշէս**. (Կանգ է առել եւ ուշադիր լսում է։) Մի՞թէ։

**Ֆլորա**. (Ոգեւորուելով) Այո՛, այն օրից դէս չըգիտեմ ինչ աւել է զուարթ տրամադրութիւն։ Ե՛ս, որ միշտ երգում էի, թռչկոտում ու նուագում նոյն իսկ իմ պաշտելի մօր մահից յետոյ։ Այն պահից իմ այժմեան կեանքն ինձ թւում է ամօթալի։ Ես մի քանի օրուայ մէջ զգացել եմ ու մտածել աւելի, քան տարիների ընթացքում։ Ես արթուն երազում եմ շղթայակապ ձեռներ, մթին ու խոնաւ արգելանոցներ, ուր տառապում են ինձնից շատ ու շատ բարձր օրիորդներ։ Դուք ասացիք, որ նրանք դժոխքի մէջ երգում են ազատական գրգռիչ երգեր, արձակում են հերոսական գոչիւններ։ Ապա լսում եմ նրանց դառն լացը, կսկծալի հեծկլտանքը եւ անէծքն ինձ նման անտարբերների գլխին։

**Արտաշէս**. (Հիացած) Բայց կանգ առէք, ես չէի ուզում ձեզ...

**Ֆլորա**. (Աւելի ու աւելի ոգեւորուելով) Դուք ասացիք, որ մայրերը ճիգն են անում ոսկրոտ ձեռներով խորտակել բանտերի դըռները, որպէս զի ազատեն իրանց զաւակներին. հայրերն անզօր սեղմում են իրանց բռունցքները։ Այս ձեր խօսքերն են, որ շարունակ հնչում են իմ ականջներին, ինչպէս դառը նախատինք... Բանտապահների կապիտ հարուածները քարերի պէս տեղում են ամուսինների եւ քոյրերի գլխին։ Եւ թշուառները, դառնալով ինձ նմաններին, նոյնպէս անէծք են թափում մեր գլխին...

**Արտաշէս**. Ոչ ձեզ նմանների, ոչ...

**Ֆլորա**. Այդպէս է, մի հերքէք։ Դուք նախատել էք հայ աղջիկներին, որոնցից ես ոչնչով բարձր չեմ։ Ապերախտ էք դուք. ինչո՞ւ գոնէ ձեր քրոջն աչքի առջեւ չունէք։ Մի՞թէ շատ օտարազգի օրիորդներ կան Անահիտի նման նոյն իսկ ձեր շրջաններում։

**Արտաշէս**. Անահիտն այն չէ։ Նա ուրիշ է։ Իմ եւ նրա մէջ եւս կայ խորխորատ, ինչպէս իմ եւ իմ հօր մէջ։

**Ֆլորա**. Բայց նրա սի՛րտը։ Ես քանի քանի անգամ տեսել եմ նրան արտասուելիս հայկական կոտորածների ժամանակ։

**Արտաշէս**. Արտասուե՞լ է նա, արդեօք, կարդալով Քիշնեւի եւ Բելոստոկի մասին։ Ո՛չ, կարող եմ երդուել։ Շատ շատ կրծքից արձակել է մի ծանր հառաչանք, բայց մի րոպէ չանցած, մտածել է. «այդ բոլորը ցաւալի է, միայն մեզ չի վերաբերում։»

**Ֆլորա**. Ունի՞ք փաստեր այդ մասին։

**Արտաշէս**. Երեք անգամ դիմել եմ նրան եւ խնդրել իմ բանտարկեալ ընկերների համար ժողովարարութիւն անել. երեք անգամ էլ նա հարցրել է. «Հայե՞ր են ընկերներդ»։ Եւ երբ իմացել է, թէ հայեր չեն — լռել է։ Այս չէ, Ֆլորա, այս չէ իմ դաւանանքը։ Ինձ համար թշուառութիւնն ազգ չունի եւ ոչ կրօն, եւ ոչ լեզու։ Մենք ուզում ենք, որ միշտ օտարներն օգնեն մեզ եւ մուրացկանի պէս շարունակ դիմում ենք բուրժուայ պետութիւններին, իսկ ինքներս մերժում ենք մեր օգնութիւնը մեզ նման թշուառներին։ Դա անարդարութիւն է։

**Ֆլորա**. (Ուշադիր լսել է։) Համաձայն եմ, համաձայն եմ։

digitised by A:R.A.R.@

Արտաշէս. Քանի ես պատանի էի, մի տեսակ պատնէշ իմ սրտում անջատում էր ազգութիւնը մարդկութիւնից։ Այժմ չկայ այդ պատնէշը։ Խորտակուել է այն համաշխարհային մեծագոյն իմաստասէրների ազդեցութեամբ, որոնց գրքերը կարդացել եմ եւ յափշտակուել։ Ահ, եթէ՛ տեսնէիք այն վայրերը, ուր մարդիկ զգում են եւ տանջւում բարձր իդէալների համար։ Այնտեղ ազգութիւնը չէ այն օղակը, որ միացնում է հոգիները, այլ մի ուրիշ աւելի բարձր, աւելի ընդարձակ եւ ամուր կապ դէպի մարդը։

Ֆլորա. Կարո՞ղ եմ, արդեօք, ես էլ զգալ ու տանջուել այդ վայրերում։

Արտաշէս. Այդ ձեզնից է կախուած։

Ֆլորա. Կըկամենայի իմանալ, ինչ յատկութիւններ են հարկաւոր մի Նոյիմզար դառնալու համար։

Արտաշէս. Նախ եւ առաջ, ունենալ այն սոսկալի լեղին, որով լիքն է Նոյիմզարի սիրտը։ Ֆլորա, նա հինգ անգամ բանտ է նստել։ Նա ծեծուել է, անարգուել։ Եւ այսօր նրա բոլոր բարեկամները տառապում են շղթաների մէջ։

Ֆլորա. Եւ դուք մերժո՞ւմ էք վերցնել այդ չնչին նուէրն այդպիսիների օգտին։

(Նախասենեակում էլէկտրական զանգակի հնչիւն։)

Արտաշէս. Թողէք միայն ձեզ մօտ։ Ես կըմտածեմ այդ մասին եւ կըյայտնեմ։ Վերցրէք, խնդրում եմ, գուցէ եկողը ձեր հայրն է։

## ՏԵՍԻԼ V.

Նոյնք եւ Նոյիմզար.

Նոյիմզար. (Ներս է մտնում աջ կողմի երկրորդ դռներից։ Հագնուած է այնպէս՝ ինչպէս Առաջին Արարուածում։) Բարեւ, օրիորդ։ Ես եկել եմ ձեզ շնորհակալութիւն յայտնելու։ Դուք Անահիտի միջոցով ուղարկել էք ինձ մեր ընկերների համար հարիւր ռուբլի։ (Ձեռ է տալիս Ֆլորային եւ յետոյ միայն նկատում Արտաշիսին։ Թեթեւ ցնցւում է. բայց եւ անմիջապէս ուղղւում է իրան։) Ես գնացել էի քո ծնողների տունը, քեզ տեսնելու։ Օ՛հ, յոգնած եմ։ (Նստում է։ Ֆլորային։) Ներեցէ՛ք։

Ֆլորա։ Խնդրեմ։

Նոյիմզար. Ճանապարհին չըգիտեմ ինչ պատահեց ինձ, յանկարծ գլուխս սկսեց սաստիկ ցաւել։ Արդեօք, չունի՞ք մի փոքր օ դը կոլօն։

Ֆլորա. Ես իսկոյն ձեզ կըտամ մի դեղ, որ շատ օգնում է։ (Շտապով գնում է խորքի ձախ դռներով։)

## ՏԵՍԻԼ VI.

Արտաշէս եւ Նոյիմզար.

Նոյիմզար. (Վեր է կենում։) Կեանքումս առաջին անգամ կոմեդիա խաղացի։

Արտաշէս. (Անհանգիստ դիտեց է Նոյիմզարին։) Ի՞նչ է պատահել։

Նոյիմզար. Իպպոլիտից նամակ ստացայ։ Այս քանի օրերս նրան էտապով ուղարկում են։ Պէտք է շտապել։

Արտաշէս. (Գունատւելով) Այո՞։

Նոյիմզար. Ինչո՞ւ վախեցար։ Դու տատանւո՞ւմ ես։

Արտաշէս. Ոչ։ Բայց ես կըկամենայի մի քանի օր էլ մնալ։

Նոյիմզար. Ի՞նչ գործ ունիս այստեղ։ Ծնողներիդ հետ տեսնուեցիր, փող բաւական ժողովուած է։ Պէտք է գնալ։

Արտաշէս. Այո, բայց այնուամենայնիւ...

Նոյիմզար. (Վախեցած) Ի՞նչ ես ուզում ասել։ Ես վախենում եմ քո մասին։ Եղել են քեզնից աւելի զօրաւոր մարդիկ, որոնք չեն դիմացել ոսկեզօծ կահ-կարասիքի փայլին եւ փարթամ ծաղիկների բուրմունքին։ Հեռանա՛նք, հեռանանք շուտով...

Արտաշէս. Լաւ, կըհեռանանք. տեղը չէ այդ մասին խօսելու։

Նոյիմզար. Ես էլ գիտեմ, որ տեղը չէ։ Ուրեմն գնանք, իսկոյն եւ եթ։ (Բռնում է Արտաշիսի ձեռը։) Ես սկսում եմ կասկածել քո մասին։ Դու պէտք է իսկոյն եւ եթ դուրս գաս ինձ հետ այստեղից։ Լսո՞ւմ ես... Արտաշէս, ես... ես... խնդրում եմ... (Աւելի ամուր սեղմելով ձեռը։) Գնանք, դու կարող ես այստեղ կործանուել...

digitised by A.R.A.R.@

### ՏԵՍԻԼ VII.

Նոյնք եւ յետոյ Ֆլորա.

Ֆլորա. (Ցած է գալիս խորքի ձախ դռնից։) Ահա, օրիորդ։ (Տեսնում է Նոյիմզարին Արտաշիսի ձեռն առնելը բռնած, ցնցւում է, զարմանում եւ անշարժ մնում։)

Լռութիւն։

Արտաշէս. (Ձեռը խլում է Նոյիմզարից եւ յետ կանգնում։)

Նոյիմզար. (Նոյնպէս շփոթւում է։)

Ֆլորա. (Ուշքը ժողովելով) Ահա, օրիորդ, գլխացաւի դեղ։ (Տալիս է մի սրուակ։) Մի փոքր քսեցէք ձեր ճակատին, կանցնի։

Նոյիմզար. (Առնում է սրուակը եւ հեղուկը մատներով քսում քունքերին) Ա՜հ, շնորհակալ եմ, դուք շատ բարի էք։ (Սրուակը դնում է սեղանի վրայ։) Շուտով կ՚անցնի։ Եթէ չանցնի էլ, փոյթ չէ, սովոր եմ։ Օրիորդ, թոյլ տուէք կրկին շնորհակալութիւն յայտնել ձեր հոգսերի համար եւ, միեւնոյն ժամանակ, մնացէք բարով...

Ֆլորա. (Սառը) Մենք այլ եւս չե՞նք տեսնուիլ։ (Ձեռը մեկնում է թոյլ։)

Նոյիմզար. Հազիւ թէ. ես վաղը գնում եմ։ Մնացէք բարով։ (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով։)

Ֆլորա. (Նայել է Արտաշիսին տարակուսած) Ինչո՞ւ համար այդպէս խորասուզուեցիք...

Արտաշէս. (Մի վճռական շարժում անելով եւ առանց նայելու Ֆլորային) Մնացէք բարով...

Ֆլորա. Դո՞ւք էլ։ (Թոյլ, գրեթէ անկամայ ձեռն է տալիս Արտաշիսին։)

Արտաշէս. Ես պարտաւոր եմ հետեւել Նոյիմզարին։ (Արագ քայլերով գնում է աջ կողմի երկրորդ դռներով։)

Ֆլորա. (Անշարժ կանգնած, ուղեկցում է աչքերով Արտաշիսին մինչեւ դռները) Ի՞նչ է նշանակում այդ. «Ես պարտաւոր եմ...» (Մի քանի քայլ գնալով դէպի բեմի խորքը։) Սոֆիա՛։

### ՏԵՍԻԼ VIII.

Ֆլորա եւ Սոֆիա.

Սոֆիա. (Ներս է մտնում աջ կողմի երկրորդ դռներով մի ծրար ձեռին։) Ի՞նչ էք հրամայում։

Ֆլորա. Գնացէք եւ խնդրեցէք Անահիտին, որ գայ այստեղ։

Սոֆիա. (Ծրարը տալով) Այս րոպէիս նրանից աղախինը բերեց այս նամակը։

Ֆլորա. (Արագ բաց է անում ծրարն ու կարդում) «Թանկագին Ֆլորա, մեր տունը կատարեալ դժոխք է դարձել։ Քեզ հետ շատ կարեւոր գործ ունիմ, սպասիր ինձ տանը»։ (Սոֆիային) Լաւ, հարկաւոր չէ գնալ։ Եթէ հայրիկն ինձ հարցնի, ասացէք զբաղուած եմ։ (Գնում է խորքի ձախ դռներով, տանելով հետը ֆարեղէնների արկղիկը։)

Սոֆիա. Ախ, դեռ պարոնի սենեակը չեմ մաքրել։ (Գնում է աջ կողմի առաջին դռներով։)

### ՏԵՍԻԼ IX.

Ալեքսանդր եւ Սենեքերիմ.

Սենեքերիմ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներից Ալեքսանդրից առաջ։ Հագնուած է այնպէս, ինչպէս Առաջին Արարուածում։) Ես շատ շնորհակալ եմ, որ այդչափ հաւատ ես ընծայում ինձ, բայց չէի կամենալ քո կտակակատարը լինել։

Ալեքսանդր. Պատճա՞ռը։

Սենեքերիմ. Պատճառը, որ փափագում եմ քեզանից առաջ մեռնել եւ կըմեռնիմ։

Ալեքսանդր. Ինձնից առողջ եւ ինձնից ջահել լինելո՞վ. ինչո՞ւ։

Սենեքերիմ. Որովհետեւ կեանքն այսուհետեւ ինձ համար մի ծանր լուծ է։

Ալեքսանդր. Այդ խօսքը քեզ չի սազում, Սենեքերիմ։ Քո կեանքը դեռ հարկաւոր է հասարակութեանը։

Սենեքերիմ. (Դառը ժպտալով) Հը՜հը, հարկաւոր է... ես էլ յիմարի պէս երեւակայում էի, թէ հարկաւոր է։ Բայց բանից երեւում է, որ, ես ոչ ոքի հարկաւոր չեմ։ Ալեքսանդր, Ալեքսանդր, իմ որդին է այն ստորջրեայ ժայռը, որին դիպչելով խորտակւում է նաւահանգստին մօտեցող նաւը։ Այն նաւը, որ կարծում էի թէ վարել եմ տաղանդով եւ հմտութեամբ։

Ալեքսանդր. Բայց Արտաշէսն ազնիւ տղայ է։

Սենեքերիմ. Անիծուի՛ այն ազնւութիւնը, որից ազգը օգուտ չունի։

digitised by A.R.A.R.@

Ալեքսանդր․ *Սենեքերիմ, ես քեզ ճանաչում եմ․ դու չուտ գրգռուող մարդ ես եւ դէպքերը միշտ չափազանցացնում ես։ Երեւի այդ մի սովորական վէճ է հօր եւ որդու մէջ։ Դու ինքդ քանի քանի անգամ գրել ես, թէ յառաջադիմութեան օրէնքը պահանջում է, որ որդիները միշտ պատերազմեն հայրերի դէմ։*

Սենեքերիմ․ *Ես յիմար կըլինէի, եթէ մոռանայի այդ օրէնքը։ Օօ, ես էլ կռուել եմ իմ հօր հետ, բայց իմ կռիւը հիմնուած է եղել հայ հասարակութեան, հայ ժողովրդի, իմ հարազատ ազգի շահերի վրայ։ Մինչդեռ իմ որդին ազգ չի ճանաչում, Ալէքսանդր, հասկացիր։ Տեսնո՞ւմ ես այն պատկերը։ (Ցոյց է տալիս Ալէքսանդրի հանգուցեալ կնոջ պատկերը)։ Ահ, ինձ է յայտնի, թէ այն որքան թանգ է քեզ համար։ Երեւակայիր, որ քո հարազատ որդին մի օր գալիս է հեռաւոր երկրից, ներս մտնում եւ յանկարծ, այդ պատկերը պոկելով, պատառում է եւ ոտնատակ անում քո աչքերի առջեւ։ Այսպէս, ճիշտ այսպէս է վարւում իմ որդին իմ քսանուհօթամեայ գրական եւ մանկավարժական գործունէութեան հետ։ Հէնց առաջին օրը նա թոյլ տուեց տղայի մէկին քար շպրտել իմ դաւանանքի դէմ։ Նա չըկատաղեց, դուրս չըձգեց այդ լրբին։ Նա լռեց, նա պաշտպանեց անգամ նրան։ Իսկ յե՛տոյ… յետո՛յ ինքն սկսեց հարուածել ինձ, եւ ի՛նչպէս, աւելի անգութ, աւելի անողոք…* (Կատաղելով) *Օհ, չորանար նրա մօր արգանդը, որ ես չունենայի նրա նման զաւակ…*

Ալեքսանդր․ *Բաւական է, հերիք անիծես…*

Սենեքերիմ․ *Նա կտրում է իմ վարկը հասարակութեան աչքում, նա ինձ ծաղրի ու ծանակի առարկայ է դարձնում։ Ի՞նչ երեսով պիտի նայիմ այսուհետեւ մարդկանց։ Չե՞ն ասիլ նրանք․ «Ա՛ա, դու ուզում էիր կրթել մի ամբողջ հասարակութիւն, չըկարողացար կրթել քո միակ որդո՞ւն։ Գնա՛, մենք քեզ չենք ճանաչում։»*

Ալեքսանդր․ *Այդպէս կասեն միայն կարճամիտները։ Սենեքերիմ, դու մոռանում ես, որ ունիս մի աղջիկ, որ քո աջ թեւն է։*

Սենեքերիմ․ *Անահի՛տը։ Այո՛, Ալէքսանդր, նա է, որ ինձ պահպանում է ծայրայեղութիւնից։ Հաւատա, եթէ նա չըլինէր, ես հէնց առաջին օրը վերջ կըտայի իմ կեանքին։*

Ալեքսանդր․ *Հերիք է, Սենեքերիմ, դու սկսում ես զառանցել։ Այդ մի թեթեւ բան է։*

Սենեքերիմ․ (Դառը ժպտալով) *Թեթե՛ւ, հը՞հը, թեթեւ… Լսիր, Ալէքսանդր, լսի՛ր, կայ մի բան, որ ես դեռ չեմ ասել քեզ։ Այդ բանն է, որ ինձ յուսահատեցնում է։* (Բռնում է Ալէքսանդրի ձեռը, ցածր ձայնով, խորհրդաւոր) *Իմ որդու գլխին կախուած է Դամոկլեան թուրը։ Վաղ թէ ուշ այն պիտի ընկնի նրա վզի վրայ։ Հասկացիր ինչպէս կամենաս։* (Բաց է թողնում Ալէքսանդրի ձեռը, հեռանում է ու նայում նրան։)

Ալեքսանդր․ (վախեցած) *Ի՞նչ ես ասում, Սենեքերիմ։*

Սենեքերիմ․ *Հապա՛։ Նա այն ճանապարհի վրայ է, որից շատ քչերն են կենդանի վերադառնում։ Լսի՛ր, լսի՛ր, Ալէքսանդր, իմ որդին գործիք է տէրրօրիստների ձեռքում։ Նա ուխտ ունի, նրան յանձնուած է բանտից ազատել իւր ընկերներին։ Նա ռումբ պիտի գցէ, լսո՞ւմ ես, ռումբ…* (Սարսափած նայում է։)

Ալեքսանդր․ *Սենեքերիմ, քո որդին կորած է, ողորմելի…*

Սենեքերիմ․ (Դողդողուն, արտասուալի ձայնով) *Ահ, Ալէքսանդր, ես անիծում եմ նրան եւ, մի եւ նոյն ժամանակ, ողբում։ Չէ՞ որ ես հայր եմ…*

Ալեքսանդր․ (Մտածելով) *Այո, այո, այժմ հասկանում եմ։ Շնորհակալ եմ, բարեկամ, որ ինձ էլ զգուշացրիր։ Իսկ ես, յիմարս, ուզում էի իմ ձեռքով իմ աղջկան կրակի մէջ գցել։* (Ցնցուելով) *Բայց գուցէ նա արդէն ընկել է։ Ո՛չ, ո՛չ, Ֆլորան յիմար չէ… Նա գիտէ, որ ես չեմ կարող տանել այդ բանը…* (Աւելի բարձր եւ գրգռուած) *Սենեքերիմ, այսօր հէնց այստեղ ես իմ աղջկայ հետ խօսում էի քո որդու մասին։ Ինչ թագցնեմ, ես Արտաշիսին համարում էի արդէն իմ փեսան։ Ֆլորան հաւանում է նրան։ Բայց հիմայ, հիմայ ամեն բան տակն ու վրայ եղաւ։ Ֆլորան նրա ընկերը չէ, այդ չի կարող լինել։ Այսուհետեւ իմ դռները փակ են նրա առջեւ։ Հասկանո՞ւմ ես իմ դրութիւնը, Սենեքերիմ, դու պիտի ներես ինձ։*

digitised by A.R.A.R.@

Սենեքերիմ. Այդ քո կամքն է, ես միայն իմ պարտքը կատարեցի։

Ալեքսանդր. Բայց մի՞թէ չի կարելի նրան յետ դարձնել այդ ճանապարհից։

Սենեքերիմ. (Ընկճուած) Ուշ է, Ալեքսանդր, ուշ է։ Բաներ կան, որ, դժբաղդաբար, չեմ կարող քեզ ասել։ Նա արդէն կործանուած է։ (Աչքերը սրբում է թաշկինակով։)

Ալեքսանդր. Լաւ, մի՛ յուսահատուիր, միջոցներ շատ կան նրան ազատելու համար։ Արի գնանք իմ սենեակը եւ միասին սառնարիւն խորհրդակցենք։ Գնանք, ի դէպս, քեզ համար կըկարդամ իմ կտակը։ (Ծոցի գրպանից դուրս է բերում մի ծալուած թուղթ։) Տեսնո՞ւմ ես այս թուղթը։ Բոլորն այստեղ է։ Այդ քո գործունէութեան պտուղներից մէկն է։ Թող քո որդին իմանայ, թէ ում գաղափարներն են մեզ հարկաւոր, նրանը, թէ՞ քոնը։ (Գնում է աջ կողմի առաջին դռներով։)

Սենեքերիմ. (Հետեւում է Ալեքսանդրին։)

## ՏԵՍԻԼ X.

### Ֆլորա եւ Անահիտ.

Ֆլորա. (Գալիս է խորքի ձախ դռներից։)

Անահիտ. (Գալիս է միաժամանակ աջ կողմի երկրորդ դռներից։)

Ֆլորա. (Առաջ վազելով) Ա՜հ, համբերութիւնս հատաւ յուսամուտից նայելով։ Վերջապէ՜ս։ (Համբուրում է) Ի՞նչ է պատահել։

Անահիտ. (Հագնուած է պարզ, գլխին յարդեայ էժանագին գլխարկ, ձեռքին տետրակների կապոց։) Հազիւ ազատուեցի դասերից։ Օ՜հ, (Յոգնած նստում է կիսաբազկաթոռներից մէկի վրայ, տետրակները դնելով սեղանի վրայ։)

Ֆլորա. Ի՞նչ է պատահել, շուտ ասա։

Անահիտ. Այսօր Արտաշէսը դարձեալ ընդհարուեց հայրիկի հետ։

Ֆլորա. Այդ ես գիտեմ։

Անահիտ. Բայց հետեւանքը չըգիտես։ Կռուից յետոյ հայրիկն իսկոյն գնաց չըգիտեմ ուր, իսկ Արտաշէսն եկաւ այստեղ։ Այն ժամանակ սկսուեց մի ուրիշ տեսարան։ Մայրս յանկարծ ունեցաւ սարսափելի հիսթերիկ — մի բան, որ երբէք չէր պատահել նրան։ Վերջը նա ուշաթափուեց փրփուրը բերանին։ Մի ամբողջ ժամ չարչարուելով, ես ու Նազանիքն հազար ու մի միջոցով հազիւ կարողացանք նրան ուշքի բերել։

Ֆլորա. Խե՜ղճ Անահիտ։

Անահիտ. Այժմ նա ուժասպառ պառկած է անկողնում։ Նա շարունակ կրկնում է. «Ես դժբաղդ եմ, ես դժբաղդ եմ։»

Ֆլորա. Բայց ի՞նչն է նրան այդպէս յուսահատեցնում։ Մի՞թէ միայն հօր ու որդու վէ՞ճը։

Անահիտ. Ֆլորա, դա վէճ չէ, այլ երկու միմեանց հակառակ տարրերի սոսկալի ընդհարում։ Ոչ մէկը չի ուզում զիջանել եւ ոչ մէկը կեղծել։ Բայց գլխաւորն այս չէ, Ֆլորա։ Կայ մի ուրիշ պատճառ, որ յուսահատեցնում է մայրիկիս եւ ես հէնց դրա համար էի ուզում քեզ տեսնել։

Ֆլորա. Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

Անահիտ. Արտաշիսի կեանքում կայ մի գաղտնիք. այն է, որ թունաւորում է նրան եւ դարձնում այդչափ տխուր եւ դիւրագրգիռ։ Հայրիկը, ինչպէս երեւում է, գիտէ այդ գաղտնիքը, բայց մեզ ոչինչ չի ասում։ Նա միայն կրկնում է. «Արտաշէսը կործանուած է։» Իսկ մայրիկն ու ես զանազան ենթադրութիւններ ենք անում։ Ինձ թւում է, որ այդ գաղտնիքը միայն դու կարող ես պարզել։

Ֆլորա. Ինչո՞ւ ես՝ անպատճառ։

Անահիտ. Արտաշէսն այժմ քեզ հետ աւելի է մտերիմ, քան մեզ հետ։ Տխուր րոպէներին նա այստեղ է վազում եւ ես գիտեմ, որ նրա կեանքից արդէն շատ բաներ են յայտնի քեզ։ Ասա, Ֆլորա, նախ եւ առաջ, այդ ի՞նչ գործ է, որ ստիպում է նրան այստեղից հեռանալ։

Ֆլորա. Չըգիտեմ։ Այդ մասին նա ոչ մի բառ չի ասել ինձ։

Անահիտ. Հաւատա՞մ, արդեօք։

Ֆլորա. Երդւում եմ մօրս գերեզմանով։

Անահիտ. Օօ, այդ բաւական է, հաւատում եմ։ Հիմա մի ուրիշ հարց. ո՞վ է այդ Նոյեմզարը, այդ օտար աղջիկը հայ անունով։

Ֆլորա. (Նոյեմզար անունը լսելիս շարժումն է անում, բայց եւ թագցնում է իւր շփոթութիւնը։) Չըգիտեմ։

Անահիտ. Արտաշէսը նրա հետ խօսում է «դու»ով։ Ասենք այդ ոչինչ։ Ասում են նրանց

digitised by A.R.A.R.@

շրջանում այդպէս է ընդունուած։ Բայց այդ Նոյիմզարի մասին հազար ու մի բան են պատմում։ Ասում են, նրա անուան հետ կապուած են մի քանի վտանգաւոր գործեր։ Արտաշէսը նրա մասին երբէք չի խօսում եւ մեր հարցերին տալիս է անորոշ պատասխաններ։ Երէկ նա մինչեւ անգամ կատաղեց, երբ մայրիկս դարձեալ փորձեց մի բան իմանալ։

Ֆլորա. *Բայց ի՞նչ էք կամենում իմանալ այդ Նոյիմզարի մասին։*

Անահիտ. *Նա մօրս սիրտը կասկածներ է գցել։ Իսկ ես հէնց առաջին օրից ատեցի այդ աղջկան։ Ինձ թւում է, որ նա իւր մտքում հայերին ատում է։*

Ֆլորա. *Այդ ես չեմ նկատել, ընդհակառակը…*

Անահիտ. *Օօ, մի՛ հաւատար այդ եկւոր թաչուհիներին… Նրանք միշտ ատում են մեզ, եւ մենք էլ պէտք է ատենք նրանց։ Բայց բանն այս չէ։ Ասում են, որ նրա եւ Արտաշէսի մէջ կայ ինչ-որ կապ։*

Ֆլորա. (Ցնցւում է, բայց կարողանում է իրան զսպել։) *Անշուշտ, գաղափարների կապ։*

Անահիտ. *Ա՜հ, ես չեմ հաւատում այդ տեսակ աղջկերանց գաղափարներին։ Ո՛չ, Ֆլորա, ուրիշ կապի մասին են խօսում, աւելի մըտերիմ…*

Ֆլորա. (Ոտքի կանգնելով) *Աւելի մտերի՞մ։*

Անահիտ. *Կողմնակի անձանցից լսել ենք եւ ամենքը խօսում են, որ Նոյիմզարն Արտաշիսի կինն է։ Այո, ապօրինի, քաղաքական ամուսնութեամբ։ Ասում են այդպէս է ընդունուած նրանց շրջանում։* (Ոտքի է կանգնում) *Մայրս հէնց որ այս լսեց, սկսեց մազերը փետտել։*

Ֆլորա. (Գունատւել է եւ զուր ճգնում է ուշքը վրան պահել։) *Ի՞նչը։* (Ձեռը յենում է նախաբազկաթոռի մէջքին) *Այժմ հանելուկը պարզւում է։*

Անահիտ. *Ի՞նչ ուրեմն, դու մի բան գիտե՞ս։ Բայց դու գունատւեցիր, դողո՞ւմ ես։ Ֆլորա, դու սիրո՞ւմ ես իմ եղբօրը.*

Ֆլորա. *Ես մի թշուառ էակ եմ։* (Բարձրաձայն հեկեկալով, փաթաթւում է Անահիտի պարանոցին։)

Անահիտ. (Բարձր ձայնով) *Սոֆիա՜…*

Սոֆիա. (Վազում է ներս աջ կողմի երկրորդ դռներից։)

Սենեքերիմ. / Ալեքսանդր. (Շտապով դուրս են գալիս աջ կողմի առաջին դռներից ապշած մնում։)

**ՎԱՐԱԳՈՅՐ**

(Կը շարունակուի) ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

## ՍԻՐՏԸՍ ԱՆԲԱՒ ՍՈՒԳԵՐՈՎ…

*Սիրտըս անբաւ սուգերով է բեռնաւոր,*
*Մինչ հեզնօրէն դեռ պէտք է որ ես ժպտիմ,*
*Անկարելի արցունքներուն պէտք է որ*
*Ես փայփայեմ հեշտին ցաւը մըտերիմ։*

*Ու կ՚ընեմ այս, — մայր-բընութեան անձնատուր,*
*Հըպարտ՝ իմ խուլ, իմ անծանօթ սուգերով.*
*Կ՚անցնիմ կեանքէն, հանդարտ քայլովս իմ ամուր,*
*Ու դէմքըս ա՛լ չունի սուգ, ցաւ կամ վըրդով։*

*Երազուած առտուները կը դիտեմ,*
*Եւ կամ քըքումն՝ ըստուերալից իրիկուան,*
*Կամ գիշերուան լոյսերուն հետ դէմ առ դէմ,*
*Ես կը փնտռեմ հոգւոյս վերջին օթեւան։*

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@